

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի գործնական պարապմունքների բովանդակության մշակման համար անհատ խորհրդատուի մրցույթ

11 հունվարի 2019թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի գործնական պարապմունքների բովանդակության մշակման համար անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Անհատ խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշչային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան,

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռուստուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,
- ✓ ուսումնական նյութերի մշակման աշխատանքներն իրականացնել՝ համագործակցելով Բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
- ✓ ուսումնասիրել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի տեղական և միջազգային գործնական պարապմունքների նյութեր,
- ✓ համագործակցել ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի հետ՝ 30 շահառուների կարիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացում,
- ✓ համագործակցել ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի հետ՝ մասնակցելով դասընթացի արդյունավետության գնահատման աշխատանքներին,
- ✓ մշակել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի գործնական պարապմունքների բովանդակության նախնական տարբերակը,
- ✓ վերանայել և բարելավել ուսումնական նյութերի գործնական պարապմունքների բովանդակությունը՝ նկատի առնելով շահառուների շրջանում ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի մշտադիտարկման և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքները:

Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.

| № | Անվանումը | Պահանջը | Միավորը |
|----|------------------------------------|---|-----------|
| 1. | Որակավորում | <ul style="list-style-type: none"> ✓ Համապատասխան ոլորտում մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ: ✓ Ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է: | 20 |
| 2. | Ընդհանուր աշխատանքային փորձ | <ul style="list-style-type: none"> ✓ Դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, <ul style="list-style-type: none"> ✓ անհատական և թիմային աշխատանքի | 40 |

| | | | |
|----|---|---|------------|
| | | փորձ, ✓ տուրիզմի և սերվիսի ոլորտի աշխատանքային փորձը ցանկալի է: | |
| 3. | Հատուկ աշխատանքային փորձ | ✓ Մասնագիտական դասընթաց(ներ)ի բովանդակության մշակման փորձ, ✓ գործնական և լաբորատոր պարապմունքների գիտելիքների ստուգման գործիքակազմի մշակման ու կիրառման փորձը ցանկալի է: | 40 |
| | Ընդամենը՝ | | 100 |

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 1,5 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), gspi1934@mail.ru, հեռախոս՝ 093-853-706:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2019 թվականի հունվարի 18-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում անցկացվող _____

անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ / _____/

(ստորագրություն)

«_____» _____ 2019 թ.